ցան ասոի երթալ յուխտ և յերկրպագութիւն Վանուցն Դղակայ Ս. Կարապետի 'ի Տարօն։

Ինչպէս նոյն հարազատ որդիք Մայր Եկեղեցոյս ջերմեռանդութեամբ և լի փափաքանօք դիմած էին յուխտ և յերկրպագութիւն Ս. Տաճարիս, նոյնպէս միաբանութիւնս ջանաց զարժանին մեծարանս և զընդունելութիւնս մատուցանել նոցին և մխիթարել զնոսա, որք հոգևոր սիրով և ջերմեռանդութեամբ բորբոքեալ՝ այնքան հեռաւոր տեղերէ փութացած էին դալ յայցելութիւն՝ յուխտ և յերկրպագութիւն հինօրեայ և աղդիս պարծանք Ս. Տեղոյս։

Խմբագրոթիւն Երբեմն Խմբագրոյ

Արդէն քաջ յայտնի է մեր աղգակիցներին այս տարուայ հացի պակասութեան ամենայն հանգամանքները, որոնք Աղէքսանդրապոլուն չեն վերաբերուի. որովհետև կարող եմ ասել, Աղէքսանդրապոլը հաղիւ է տեսած 40 տարուայ շրջանում երկու կամ երեք թանգութիւններ. առաջինները՝ կարելի է ասել մորեխն, պատերազմի, կամ որ և իցէ պատահմունքներից է պատահած. իսկ այժմեան թանգութիւնը ոչինչից չէ, եթէ ոչ մերաքաղաքացի արծաթեանէր մի քանի անհատներից, որովհետև առատ ժամանակը դիղեցին շտեմարաններում. համարեա իւրաքանչիւրին մէջ հաղար, երկու հաղար, և մինչև անգամ հինգ հաղար սոմար(*)ցորեան, և այսպիսի թանգութեան գլխաւոր պատճառն եղան, որոնք դեռ ևս սպասումն մինչև ցայսօր մի պղ ևս թանգութեան, որ ֆունը մինչև 1 ռուբլի 20 կոպէկի է ծախվում. 'ի հարկէ՝ մեր քաղաքի դրութեան ծանօթները կ'հասկանան այդ թանգութեան ցաւալի դրութիւնը, որովհետև մեր քաղաքը համարեա միշտ ալիւրի փութը երբեմն կամ ֆունտոն կոպէկի, կամ միփոքը էլ աւելի է դնած, և այդ էժանութեան համար է, որ ապրում է Աղէքսանդրապոլը. ապա թէ ոչ՝ մի վաճառաշահ քաղաք չէ։

Մեր համաքաղաքացի Յարդոյ Յովհաննէս Կորանեանցը և Պետրոս Զիթողճեանցը տեսնելով հասարակութեան այդ ցաւալի դրութիւնը, մտերումը ցրուեցին ալիւր իւրաքանչիւր անձեռնահասներին. Առաջինն՝ 50 ֆունտ ալիւր, տալով ալիւրի հետ ամեն մի փթի համար 10 կոպէկ, փայտի փող, և երկու մոմ. և Երկրորդը 75 ֆունտ ալիւր. բայց ինչպէս կ'լսենք հաւատարիմ աղբիւրներից՝ կրկին Զիթողճեանցը մտադիր է բաժանելու 20 սոմար ցորեան. դեռ ևս չեն համչում և չեն նախանձում այն հարուստները, որոնց ամբարներում դիղուած կայ վերոյիշեալ գումար ցորեանները. և Դոցա այդ աղքատասիրութեան կերպը այս յառաջին անգամն է, որ տեսնում մեր քաղաքը, և ճշմարիտը խոստովանելու է, որ մեծ օգնութիւն արած են հասարակութեանը այսպիսի նեղ ժամանակում։ Դոցա այդ նախաշաւիղ առաքինութեանը անտարակոյս հետևելով և մի քանի ողորմած իշխաններ, նոքա ևս առնելու են որ և իցէ մի բարերարութիւն մեր խեղճ հասարակութեանը. ահա հրապարակաւ յայտնում ենք հասարակութեան և իմ կողմից, մեր սրտերի անչափ գոհութիւնը, աղօթելով նոցա կենաց երկարատևութեան համար։

Կ. Պոլսոյ Մատենեանց

Ի 20 Ապրիլի 1870 ամի
ՅԱղէքսանդրապոլ։

(*) Այն մի սոմարը 20 Ռուսական փութ է

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ.

Ցայտնի է թէ՝ Արմաշի եկեղեցին ի հիմանց նորոգութեան կարօտ ըլլալով, բաւական ժամանակէ հետէ վար առնուած և նորոգութիւնը ըսկսուած, սակայն դժբաղդաբար վանքին աղքատութեան և դրամական հանգանակութեանց նուազութեան պատճառաւ դադրած է շինութեան գործը։

Պատուարժան Միաբանութիւնը՝ որ վերջին օրերս բաղորովին ամփոփ վիճակի մէջ կգտնուի, գը-